

ասում եմ, սուտ ա, Թորոսն էր հարբել ու համնողին ծեծում էր»... Քեօխվէն թէ՛ «սուտ ա, ես հարբած չէի».
— «Ձերդ ազնուութեան, ասում եմ, հրէս հէնց հիմի էլ հարբած ա եկել ձեզ մօտ»... Պրիստաւը աչքերը ոլորեց, մօտ գնաց քեօխվին, արաղի հոտը որ չ'առանւ... «Պաշոյ վո՛ն, մերզաւէց» արաւ ու հրամայեց որ ցէպը կարապետին տայ... Դուրս եկանք, Խօօի դուքանումը մի լաւ քէֆ էլ արինք ու... տօ գինին դէսը բերէք է՛ք»...

Վ. Փափազեան

* * *

Նման գայլերի խմբին ամեհի,
Ձմրան գիշերին ոռնում է քամին
Եւ իմ պարտիզում—մռայլ, ամայի
Խեղճ ուռիներիս շարդում է քամին:

Ա՛խ, մանկուց տանջուեց քու սէրը, սիրտ իմ,
Ոչ ոք չհասկացաւ երազդ աղուոր.
Ջուր մի որոնիր սիրտ մի մտերիմ,—
Ծնուել է հոգին յաւէրժ մենաւոր:

Հանիր քու սէրը սրտիցդ անյոյս,—
—Սյդ խորթ, ապօրէ՛ն գաւազն աշխարհի,—
Քցիր այս դաժան, մութ գիշերին դուրս՝
Ցուրտ քամու բերան. —Թո՛ղ երթայ սառի...

Թող լայ, հեծեծայ սէրս՝ սրբ, անմայր.
Եւ քամին լացը նորա թող տանի
Ալէկոծ ծովեր, անապատ մի վայր,
Սակայն մարդու մօտ... երբէք չը տանի...

Ոռնում է քամին, վայում դժնդակ
Մռայլ գիշերին ձիւն-ձմերայնի.
Ա՛խ, սէրս շարդուած ուռիների տակ
Մեռնում է մենակ. —Թո՛ղ երթայ մեռնի...

Ա. Դստհակեան